

Ավելին, քան մեղրը

Փոշոտումը կենսական էկոհամակարգային ծառայությունն է: Այն նպաստում է մեր մոլորակի կենսաբազմազանության պահպանմանը և պարենային անվտանգության ապահովմանը, որը հիմնականում ապահովում են մեղուները և այլ փոշոտող միջատները: Միլիոնավոր տարիներ շարունակ փոշոտողները կատարում են անփոխարինելի գործառույթ. դրանք ոչ միայն հնարավորություն են տալիս արտադրել սննդարար նյութերով հարուստ սնունդ, ինչպիսիք են մրգերը, բանջարեղենը, ընկուզեղենը և սերմերը, այլև աջակցում են մոլորակի էկոհամակարգերի առողջությանը: Փոշոտողները նպաստում են աշխարհի ծաղկավոր բույսերի մոտավորապես 88%-ի և աշխարհի առաջատար պարենային մշակաբույսերի 76%-ի վերարտադրությանը: Այնուամենայնիվ, փոշոտողների և փոշոտման ծառայությունների խորացող ճգնաժամը մեծ մտահոգություն է առաջացնում:

Վայրի փոշոտող միջատները կարևոր դեր են խաղում կենսաբազմազանության պահպանման և պարենային անվտանգության ապահովման գործում: Դրանք փոշոտում են վայրի և գյուղատնտեսական մշակաբույսերը, ինչը կարևոր է սերմերի և մրգերի արտադրության համար, ինչպես նաև նպաստում են էկոհամակարգերի ընդհանուր առողջությանը՝ բարելավելով հողի բերրիությունը և կարգավորելով ջրային հաշվեկշիռը: Դրանց գործունեությունն անմիջականորեն կապված է մեր սեղանների և առկա սննդամթերքների կեսից ավելին արտադրելու հետ:



Ի՞նչ է փոշոտումը


Փոշոտումը բույսերի բազմացման անբաժանելի մասն է՝ ծաղկափոշու փոխանցումը առեջներից դեպի վարսանդը: Ծաղիկները միջատներին գրավում են իրենց վառ գույնով, բույրով և ձևով: Ծաղկավոր բույսերի լավագույն փոշոտողները թիթեռներն են, մեղուները և իշամեղուները: Փոշոտումը կարող է տեղի ունենալ նաև քամու միջոցով:

Փոշոտումը հանգեցնում է սերմերի առաջացմանը և կարևոր է շատ բույսերի բազմացման համար: Նեկտարը (շաքարային հյուս) փոշոտողներին ապահովում է ածխաջրերով, իսկ ծաղկափոշին՝ սպիտակուցներով, ճարպերով, վիտամիններով, հանքանյութերով և անհրաժեշտ ֆիտոքիմիական նյութերով:

Ի՞նչ դեր են խաղում փոշոտող միջատները բույսի կյանքում

Մեղուներն ու միջատները բույսերի հիմնական փոշոտողներն են: Դրանք ծաղկափոշին տեղափոխում են մեկ ծաղկից

մյուսը՝ նպաստելով փոշոտմանը և հետագա պտուղների ու սերմերի ձևավորմանը: Առանց դրանց շատ ծաղկող բույսեր չէին կարողանա բազմանալ կամ բերք տալ: Առանց փոշոտողների և փոշոտման շատ փոխկապակցված տեսակներ կանհետանային, ինչը կհանգեցներ էկոհամակարգերի փլուզմանը: Մենք կարող ենք կորցնել բոլոր այն բույսերը, որոնք մեղուները փոշոտում են, բոլոր այն կենդանիներին, որոնք սնվում են այդ բույսերով, և այսպես շարունակ՝ ըստ սննդային շղթայի օղակների: Մա նշանակում է, որ մեղուներից և այլ փոշոտողներից զուրկ աշխարհը կարող է դժվարությունների հանդիպել մոլորակի 7 մլրդ բնակչությանը սննդով ապահովելու հարցում:



Ի՞նչ օգուտներ են տալիս միջատները


Մեղուները մարդկանց տալիս են մեղր և մեղրամոմ, մրջյուններն ու զատիկները ոչնչացնում են ֆսասակար միջատներին, մեղուներն ու թիթեռները փոշոտում են բույսերը, մրջյունները, մոծակները, ճանձերը և թիթեռները կենդանիների և թռչունների համար ծառայում են որպես սնունդ:

Ի՞նչ նշանակություն ունեն փոշոտողները էկոհամակարգերի համար

Փոշոտողները բազմաթիվ կենդանական տեսակների համար ապահովում են սնունդ, բնակատեղի և այլ ռեսուրսների լայն շրջանակ: Այսպիսով, փոշոտողները կարևոր դեր են խաղում էկոհամակարգերի պահպանման գործում՝ ապահովելով սննդի արտադրություն, բնակատեղիներ և բնական պաշարներ:

Հարմարվողականություն կլիմայի փոփոխությանը

Փոշոտողների, այդ թվում՝ մեղրատու մեղուների առկայությունը բարելավում է գյուղատնտեսական մշակաբույսերի քանակական և որակական ցուցանիշները: Փոշոտողների և դրանց տեսակների բազմազանության պահպանումը, որոնցից



յուրաքանչյուրն ունի յուրահատուկ բնութագրեր և կլիմայի փոփոխությանը հարմարվելու ունակություն, նպաստում է կլիմայի ազդեցության նկատմամբ դիմակայունության բարձրացմանը: Նման բազմազանությունը երաշխավորում է արդյունավետ փոշոտման ծառայությունների մատչելիությունն ինչպես ներկա, այնպես էլ ապագա կլիմայական պայմաններում և կարևոր է արտաքին ազդեցությունների նկատմամբ գյուղատնտեսական էկոհամակարգերի դիմակայունության ամրապնդման համար՝ կենսաբազմազանության բարելավման միջոցով:

Փոշոտումը կարևոր դեր է խաղում կենսաապահովման գործում

Գյուղատնտեսական համակարգերում փոշոտման ծառայությունները կարևոր են բազմազան մշակաբույսերի արտադրության համար, այդ թվում՝ մրգատու և այգեգործական մշակաբույսերի, կերային բույսերի աճեցման և բազմաթիվ արմատային ու մանրաթելային մշակաբույսերի սերմերի ստացման համար: Գյուղատնտեսական մշակաբույսերի համաշխարհային արտադրանքի մոտ 35%-ը բաժին է ընկնում փոշոտողների ծառայությունների կարիքն ունեցող մշակաբույսերին, որոնք նաև մեծացնում են 115 հիմնական պարենային մշակաբույսերից 87-ի և բազմաթիվ դեղաբույսերի բերքատվությունը: Փոշոտողների օգուտը չի սահմանափակվում միայն սննդամթերքի արտադրության քանակի և որակի ավելացմամբ. փոշոտման կարիք ունեցող բույսերն ապահովում են միկրոէլեմենտների և վիտամինների լայն տեսականի, որոնք նպաստում են առողջ սննդակարգին և ապահովում են սննդային բազմազանություն:



Մեղուները և այլ փոշոտողները

Պատմականորեն փոշոտումը տեղի է ունեցել բնական ճանապարհով և կապված չի եղել ուղղակի ծախսերի հետ: Այնուամենայնիվ, այժմ կարծիք կա, որ ժամանակակից գյուղատնտեսական մեթոդներին անցումը, որը զուգորդվել է գյուղատնտեսական հողերի ընդլայնմամբ և թունաքիմիկատների ինտենսիվ օգտագործմամբ, կարող է հանգեցնել փոշոտողների պոպուլյացիաների նվազմանը: Այս բացասական միտումը կարող է սահմանափակել վիտամիններով հարուստ մշակաբույսերի մատչելիությունը և բարձրացնել դրանց արժեքը, ինչը կարող է հանգեցնել թերսնման և ոչ վարակիչ հիվանդությունների տարածման հետևանքով առաջացած առողջական խնդիրների:

Փոքր ֆերմերների առողջությունը, սննդամթերքով ապահովումը և ֆինանսական բարեկեցությունը պահպանելու համար անհրաժեշտ է անցում կատարել այնպիսի գյուղատնտեսական մեթոդների, որոնք նվազագույնի կհասցնեն քիմիական նյութերի օգտագործումը և կբարելավեն գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի որակը և բերքատվությունը: Քանի որ ընտելացված փոշոտողների համար ավելի ու ավելի է դժվարանում բավարար ծավալով փոշոտման ծառայությունների մատուցումը, աճում է հետաքրքրությունը վայրի փոշոտողների պահպանման կայուն մեթոդների նկատմամբ, որպեսզի դրանք կարողանան ապահովել այս կարևոր էկոհամակարգային ծառայությունները: Ե՛վ վայրի, և՛ ընտելացված փոշոտողները կարևոր են գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության համար:

Թռչուններ, մեղուներ, չղջիկներ և ոչ միայն

Այսպիսով, ի՞նչ գիտենք ֆաունայի այս ներկայացուցիչների մասին: Մեղուները ծանոթ միջատներ են: Գոյություն ունի մեղունների մոտավորապես 20000 տեսակ, որոնց մեծ մասը վայրի փոշոտողներ են: Այնուամենայնիվ, շատերը չգիտեն, որ բույսերի փոշոտումն իրականացվում է ոչ միայն մեղունների, այլև ցեցերի, ճանձերի, կրետների, բզեզների և թիթեռների, ինչպես նաև որոշ ողնաշարավորների կողմից:





Ողնաշարավոր փոշոտողների թվում են չղջիկները, չթռչող կաթնասունները, ներառյալ որոշ կապիկներ, կրծողներ, լեմուրներ, սկյուռներ, ինչպես նաև թռչունները (ներառյալ կոլիբրիները, նեկտար հավաքող ճնճղուկազգիները, կեռակտուցները և թութակների որոշ տեսակներ): Փոշոտող տեսակների առատությունն ու բազմազանությունն ապահովում են բույսերի փոշոտման ծառայությունների անընդհատ մատակարարում, ինչը նպաստում է պարենի արտադրության բարելավմանը:

Ի՞նչն է սպառնում փոշոտողներին

Մեղուները և այլ փոշոտողներ լուրջ սպառնալիքի տակ են. մարդածին գործունեության պատճառով փոշոտողների անհետացումը ներկայումս 100-1000 անգամ գերազանցում է նորմալ ցուցանիշները: Համաձայն Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ/ԻՍՄ) կողմից մեղուների համար ազգային մակարդակում Կարմիր ցուցակների պատրաստման գործընթացում տրված գնահատականների, այս միջատների մոտ 40%-ը գտնվում է ոչնչացման վտանգի տակ. ողնաշարավոր փոշոտողների 16,5%-ը համընդհանուր ոչնչացման վտանգի տակ են: Փոշոտողների պոպուլյացիաների կրճատման և ծաղկավոր բույսերին դրանց կողմից մատուցվող ծառայությունների խաթարման հիմնական պատճառներն են բնակատեղիների կորուստը և մասնատումը, ինտենսիվ գյուղատնտեսությունը, թունոնակ թունաքիմիկատների, ինչպիսիք են նեոնիկոտինոիդները, օգտագործումը, մոնոշակաբույսերի աճեցումը, փսասատուները, հիվանդությունները և կլիմայի փոփոխության հետևանքները, ինչպիսիք են ծայրահեղ ջերմաստիճանները և ծաղկման շրջանների փոփոխությունը:



Ընտանի մեղրատու մեղուները կարևոր դեր են խաղում գյուղատնտեսական մշակաբույսերի փոշոտման գործում: Այնուամենայնիվ, դրանք չեն կարող լիովին փոխարինել վայրի մեղուներին և այլ միջատներին այս գործառնություն:



Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամի կողմից՝ «Ռաջա հիմնադրամ»-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Մեղրատու մեղուների, վայրի մեղուների և այլ փոշոտողների էական դերը գյուղատնտեսությունում» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամ
 ՀՀ, Երևան, Շինարարների փող. 18, բն. 52
 Էլ. փոստ՝ info@ruraldaf.am
 Վեբ կայք՝ http://www.ruraldaf.am